

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայոց քաճռոնի յիսնամեակը. — Յովհաննէս Աբելեանի յոբելեանը. — Մի քանի օր ևս կը լրանայ հայոց մէջ թատրոնի գոյութեան յիսուն տարին: Մանկական քայլերով սկսուած կեանքի այս մեծ և կենդանի դպրոցը մեզանում սկսեց բաւականին արագ կերպով զարգանալ, տալով տաղանդաւոր դերասաններ ու դերասանուհիներ, սակայն մի ծանր ցաւ, որ շարունակ կրժել է ու կրժում է հայ դերասանների բարոյական աշխարհը, այդ հայոց սեպհական թատրոն չլինելն է: Հայ դերասանը վարձու բնակարանում ապրող տնուորի պէս ստիպուած է եղել միշտ իւր գոյքը շալակած փողոցից փողոց, տնէ տուն թափառել:

Թիֆլիսում ներսիսեան դպրանոցի նեղլիկ սենեակներում առաջի բեմական վարագոյրը քաշելով, հայ դերասանը շուտով անցնում է Շիրմազանեանի «դարբասը, այստեղից էլ իւր կարտոնների քոչը Արծրունու «բարվանս սարայը» փեխադրում և ապա ուրիշ բարձր հիմնարկութիւններ և ինչպէս եթէ գրականագէտը մնայ առանց գրասեղանի, նոյնպէս և հայ դերասանը առանց սեպհական բեմի թափառել է ու թափառում է ցարդ:—

Ի մեծ ամօթ մեր ազգի հայերը մինչև օրս, երբ խօսք է եղել սեպհական թատրոնի շինութեան մասին, չեն կարողացել գրական հետեանքի գալ: Գեռ ևս ութսունական թուականներին մեր թատրոնի ոսկեդարի շրջանում, Թիֆլիսում ժամանակի առաջաւորները փորձեցին մի ակումբ հիմնել, նման այժմեան արտիստիքական կլուբի, ժողովեցին նոյն իսկ 2—4 հազար ռուբլի, բայց ծրագիրը այնչափ խոշոր վերցրին ու անձնական հաշիւները այնչափ բորբոքեցին, որ կլուբը թղթի վրայ էլ մընաց և միմիայն տասն տարի յետոյ սկսեցին նորից խօսել այդ մասին իշխ. Ամատունու արժարժմամբ, սակայն այս

անդամ՝ ժամանակի նեղ կուսակցական պայքարը այդ
 Լլիւզիոյին էլ վերջ տուեց, ու թէև Թիֆլիսում վերջերս
 հայ դրամատիքական ընկերութիւն իսկ հիմնուեց և նորա
 ղեկավարները (բժ. Մուրադեան, Ջարար) քանիցս շեշ-
 տակի յիշեցին հայ հասարակութեան սեպհական թատ-
 րոն ունենալու կենդանի անհրաժեշտութիւնը, էլի հարցը
 մնաց հարց, իսկ երկար ժամանակի ընթացքում՝ այդ
 նպատակով ժողոված «ձեռնմխելի» և «անձեռնմխելի»
 գումարները հեղհեղէ դարձան միմիայն «ձեռնմխելի» և
 հայ դերասանը իւր գարգէրոգով դարձեալ մնաց հիւ-
 րատանը . . .

1907 թ. Դեկտեմբերի 17, երկուշաբթի երեկոյեան,
 Թիֆլիսի Արտիստիքական Ընկ. Թատրոնում ներկայ հայ
 դերասանական խմբի պարծանք տաղանդաւոր Յովհան-
 նէս Աբելեանը արտասուքն աչքերին, դահլիճը լցրած հայ
 հասարակութեան դառնալով մրմնջում էր.

— Մի խնդիր ունեմ՝ հայ հասարակութիւնից, թող նա
 հայ դերասաններին տայ մի անկիւն, մի տուն, մի սեպ-
 հական թատրոն, և դա կլինի այն մեծ արձանը, որ հայ
 ժողովուրդը կըրայ հայ գեղարուեստի համար . . .

Դեկտեմբերի 17 հայ դերասան Աբելեանի 25 ամեայ
 յորելեանի օրն էր, այդ երեկոյ փրտկաց հայ «Թափառա-
 կան» դերասանի լեցուն սիրտը, նա իւր՝ սրտի նեար-
 դերով գունաւորած բուն զգացմունքը պարզ կերպով
 ուղղեց դէպի դահլիճը. իսկ հայ հասարակութիւնը, հայ
 թատրոնի յիանամեայ յորելեանի նախօրեակին, հայ տա-
 ղանդաւոր դերասանի 25 ամեայ յորելեանը ամենայն
 ճոխութեամբ ասոնց օտար բնակարանում, հիւրատանը . . .

Յովհաննէս Աբելեանը միայն է մեր դերասաններից,
 որ տօնում է իւր 25-ամեայ յորելեանը դեռ ևս իւր
 տաղանդի վառ շրջանում:

Լինելով Շամախու հայ մի վաճառական ընտանիքի
 զաւակ, 1865 թուին ծնուած Յովհաննէսը շատ վաղ
 սկսեց յաճախել դպրոց և թէև նորա ուսումը սկսուած
 էր տէրտէրի ձեռքով, բայց 1876 թ. նորան արդէն Բա-

քուի աէալական դպրոցումն ենք տեսնում: Աւթսունական թուականների հայ բնմի աստղերի ընկերակցութիւնից բաժանուած Սափրազեանի ու տիկնայք Ալմայի ու Փառանձեմի Բաբում տուած մի քանի ներկայացումները խորը տպաւորութիւն են թողնում պատանի Արեւելեանի ու իւր աէալիստ ընկերների վրայ: Արեւելեանի շուրջը կենտրոնանում է սիրողների մի խմբակ ու նա առաջին անգամ բեմ է ելնում Բաբում «Մասեայ օգի» պիէսում և այնուհետև բեմը նորան քաշում է աւելի քան թէ դպրոցը, որտեղից նա շաւարտած դուրս ելնելով մտնում է դերասան Գօնչարովի խումբը և ապա Բվանսով-Կօզելսկու խմբի մէջ բեմայարգարի պաշտօն ստանձնում: 1886 թ. Արեւելեանը Բաբուից անցնում է Թիֆլիս Սարլինա-Եօլակայի խումբը: Առ հասարակ ուսու գլումատիք խմբերը թողել են Արեւելեանի վրայ մեծ ազդեցութիւն և սորա են եղել նորա տաղանդի առաջին մշակողները:— Սակայն Արեւելեանի հայ դերասանի կոչման անցնելու շարժառիթը եղել է հռչակաւոր Ագամեանը, որին գեռ ևս Գօնչարովը հրաւիրել էր նախիջևանից Բաբու, որտեղից ապա Թիֆլիսի նորակազմ հայ դրամատիք. — տկումբը հրաւիրում է Թիֆլիս, ուր նաև «Արքայ Լիր»-ի ներկայացմանը Արեւելեանը յաջող կերպով կատարում էր Գլոչեսդերի դերը: Ագամեանը թողնում է երիտասարդ Յովհաննիսի վրայ շատ խորը տպաւորութիւն և նա դառնում է այդ օրերից «սխտեալ հայ դերասան», առնելով իւր ձեռքը հայ դերասանի թափառականի ցուպը ...

Այնուհետև Արեւելեանը անցնում է Բաբու, Մոսկուա, նորից Բաբու, գործելով Բաբում մեծ մասամբ ուսու դերասանների հետ (Կօզելսկու և Անդրէկ Բուրլաձի), որոնք նորա տաղանդի զարգացման, իւր իսկ ասելով, շատ են նպաստում: Մոսկուայում մնում է նա 1889 թ. մի քանի ամիս միայն, առաւելապէս ուսումնասիրելով թատրոնական արուեստը: Բաբում նա կազմում է նաև հայ սիրողների մի նոր խումբ, պէտք է ասել նրա ձեռնարկութիւնները շատ էլ յաջող չեն գնում և նա՝ հայկական

Թատրոնի անկման շրջանում՝ թողնում է նոյն իսկ բեմը ու նախաձեռնելի կառավարիչ դառնում:

Իննսուներկան թուականներին հայ բեմի օջախը ըսկսում է առկայծել. տաղանդաւոր դերասան Պետրոսեանը նոյնպէս երկար թափառելուց յետոյ, վերջապէս յաջողեցնում է կազմակերպել Թիֆլիսում 1891 թուին մի մըշտական հայ դերասանական խումբ, որի անդամներից մէկն է դառնում նաև Աբելեանը ու այնուհետև միշտ մնում հայ բեմի վրայ, տարեցտարի զարգացնելով իւր դերասանական տաղանդը, մինչև որ անցեալ Դեկտ. 17 Թիֆլիսում դերասանական ընկերութեան նախաձեռնութեամբ, արտիստ. ընկ. թատրոնում տօնւում է նորաբեմական բեղմնաւոր գործունէութեան 25 ամեակը աչքի ընկնող շքեղութեամբ ու ճոխութեամբ, ծայրէ ի ծայր լիքը թատրոնի հասարակութեան մասնակցութեամբ:

Ընդունուած սովորութեան համաձայն այդ իրիկուն յորելեարը բեմ էր հանել երեք պիէսներից մի մի գործողութիւն («Ուրուական», «Արցունքի հովիտ» և «Կլեշինսկու հարս»), որոնց տարբեր տիպի ու խառնուածքի խոշոր հերոսների հոգին յաջող կերպով կարողանում է պատկերացնել Աբելեանը իւր հռչակաւոր, մտածուած խաղով:—Յորելեանական հանդէսը կատարւում է բեմի վրայ, այս տաղանդը յարգելու ժողովուել էին հաստատութիւնների, քաղաքների, հասարակութիւնների ներկայացուցիչներ իւրեանց պատկներով, ընծաներով և ուղերձներով, գլուխ ունենալով իրենց պատկառելի դրամատուրգ Դ. Սունդուկեանցին:

Պատգամաւորների մեծ մասը, սկսած վետերան Սունդուկեանից ջերմ ողջոյններ և զգացուած խօսքեր ուղղեցին յորելեարին, դրուատելով նորա տաղանդը, սէրն ու անսահման եռանդը դէպի դեղարուեստը, դէպի թատրոնը:

Աչքի ընկնող մի հանգամանք մեր հարուստների ջերմ մասնակցութիւնն էր հանդիսին, Վրաց դրամատիք. խմբի կողմից տիկ. Տ. Աբաշիձէն կարգաց մի սիրուն ուղերձ վրացերէն, իսկ ուսաց դերասանական խմբի կողմից շատ

գողտրիկ ու խելացի խօսեց արտիստ Շօրշտէյնը, որի ճառը արժանացաւ հասարակութեան փոթորկալի ծափահարութեան:

Շնորհաւորել ու բարեմաղթել էին համարեա բոլոր հաստատութիւններն ու մամուլը, ինչպէս նաև «Արարատ»-ի Խմբագրութիւնն ու Էջմիածնի ձեւարանը:

Յորելեարի պատասխան-շնորհակալութեան խօսքերը չափազանց զգացուած էին և սիրուն. հանդիսականների ականջին նորա իւրաքանչիւր բառը հնչում էր շատ հարազատ, մանաւանդ յուզման աստիճանի հասցրած հետեւեալ շարք՝ «Թէև իմ 25-ամեայ գերասանութեան միջոցին ես յաճախ տանջուել եմ քաղցից ու ցրտից, սակայն քեզ եմ նուիրել իմ բոլոր ոյժերը, թանկագին հայ ժողովուրդ, և այսուհետև էլ քեզ պիտի ծառայեցնեմ իմ ամբողջ անձը» ...

† Սաթեճիկ Չմէկեան.—1907 թ. Դեկտ. 17-ին Թիֆլիսում տօնուեցաւ մեծ յարգանքներով հայ բեմի անխոնջ աշխատաւոր Յ. Աբելեանի յորելեանը, իսկ 13 օր յետոյ հողին յանձնուեցաւ նոյնպէս մեծ յարգանքներով նոյն բեմի նախամայր գերասանուհի 56-ամեայ տիկ. Սաթեճիկ Չմէկեանի մարմինը:

Սաթեճիկ Չմէկեանը իրեն նուիրել էր բեմին դեռ ևս վաթսունական թուականներին, երբ հայ կնոջ բեմի վրայ տեսնելը շատ խորթ էր թուում: Բայց նա ոտի տակ տուաւ այդ բոլոր նախապաշարումները և Գ. Չմէկեանի, Ամերիկեանի, Սուքիասեանի, Մանդինեանի և այլոց հետ հայ բեմի ջահը պահում էր բարձր և վառ: Հայ առաջի գերասանուհու դազաղի յուզարկաւորութիւնը հանդիսաւոր էր և թաղումը սրտառուչ: Նորա 30 տարուց աւելի հայ բեմին անձնուիրաբար ծառայելը բուռն զգացմունքների արտայայտութեան առիթ եղաւ. «Եթէ այսօր հայ բեմը կանգուն է, մենք շատ բաներով պարտական ենք Սաթ. Չմէկեանին», ճառում էր մի պատգամաւոր. «Մայրիկ, դու գնացիր և թողիլ մեզ մի կտակ՝—երբէք չձերանալ, եր-

բէք շոգնել, երբէք չվհատել.—մենք կպահենք քո կրտսակը նուիրական ինչպէս քո յիշատակը», արտասանում էր դերասան Արմենեան ...

† Ճիշտ նոյն օրը, երբ Թիֆլիսում հայ դերասանները շուրջ էին բոլորել Սաթ. Չմշկեանի թարմ շերիմը, Բաբւում, նոյնպէս շքեղութեամբ ու հանդիսաւորութեամբ թաղում էին Սաթ. Չմշկեանի բեմական քոյր, հայ շնորհալի դերասանուհի վաղամեռիկ օր. Քնարիկին, որ խորհրդաւոր անձնասպանութեամբ Դեկտ. 25-ին վերջ էր տուել իւր ծաղիկ կեանքին:

Պրոֆեսոր Մառը Բաբւում. — Անցեալ Դեկտեմբերի 21-ին, 22-ին և 23-ին Բաբւի Ակմբանոցի դահլճում յարգելի պրոֆեսորը կարգաց երեք դասախօսութիւն Անիում կատարած իւր պեղումների առթիւ, դասախօսութեան նիւթ առնելով հայկական հինաւուրց մայրաքաղաք Անիի գրական պատմութիւնը մինչև իւր պեղումներն սկսելը, պեղումների արդիւնքն ու լուսաբանութիւնը, Գագիկի եկեղեցին ու արձանը իւր պատմութեամբ, Բագրատունեաց արքունիքի պեղումները, պեղումների ներկայ վիճակն ու ապագայ ծրագիրներն ու կարևոր խնդիրները:

Երկու տարի յառաջ Բագրատունեաց արքայանիտ քաղաքի պեղումներն սկսելով ուսուցչապետ Մառը ձեռքի տակ ունէր Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան սչմեծ դրամական օժանդակութիւնը, որ նորա ձեռնարկած հսկայական պեղման գործի համար ի հարկէ շատ ջնջին մի դումար էր: Հայ մամուլը ժամանակին ջերմ կերպով ողջունելով հնագէտ ուսուցչապետի այս մեր ազգային կեանքի համար կարևոր ձեռնարկութեան սկիզբը, կոչ էր արել նաև ունևոր անձանց օգնել նիւթականով սկսած գործը յաջողութեամբ պսակելու համար, որ պահանջում է ե՛ր ժամանակ, բայց առաւել ևս դրամ: Ուսուցչապետի Բաբւի դասախօսութիւնները հետևանք են նիւ-

Թականապէս հնախուղին օգնելու ցանկութեան, իսկ այդ ցանկութեան յղացումը պատկանում է Բաքուի Հայոց Կուլտուրական Միութեան գեղարուեստական սեկցիային, որ յանձն առնելով դասախօսութիւնների կազմակերպած գործը, հոգացել էր և անհրաժեշտ նիւթականը, առաջարկելով ամբողջ եկամուտը յատկացնել պեղումների գործին:

Ընդունելով բաքուեցիների այս հրաւերը, Մառը տօներին շտապել էր Բաքու և իւր վերին աստիճանի շահագրգիռ դասախօսութիւններով մեծ բաւականութիւն պատճառել ունկնդիր հասարակութեան:

Ուսուցչապետը առանձնապէս շեշտել է պատմական մի կարևոր հանգամանք թէ՛ պեղումների ցուցմամբ հայկական արուեստը այնչափ զարգացած է եղել, որ ազգել է նոյն իսկ եւրոպական գեղարուեստի վրայ և նա չի մարել Բագրատունեաց արքունիքի անկմամբ ու Անիի աւերմամբ, այլ 12-րդ և յետագայ դարերում ևս ծաղկեալ վիճակի մէջ է եղել, ազգելով նաև իւր հարևան ազգութիւնների վրայ և մատակարարելով շրջականներին հայ հմուտ արուեստաւորներ, մինչև անգամ՝ մահմեդական և այլ ազգերի թողած կոթողների վրայ պարզ նկատելի է հայ արուեստաւորի ձեռքի արգելները:

Հնախոյզ ուսուցչապետի դասախօսութիւնը պարզել է նաև մի այլ պատմական հանգամանք, որ պեղումների տուած հայ իշխանների պալատների կա՛հ կարասիքը համեմատելով նոյն քաղաքի հասարակ ժողովրդի թողած ամանների, կարասիքի հետ — պարզուում է, որ հայ իշխանների առտնեայ նիստ ու կացը հայկական կնիք չէ կրել, այլ սովորութիւնով, ինչպէս և լեզուով — օտարամուր: Ինչպէս հայ իշխանները, նոյնպէս և սոցա օրինակին հետեւող հայ փարթամ իշխանազունք իւրեանց առտնին նիստ ու կացով ու առօրեայ սովորութիւններով, ինչպէս նաև լեզուով աւելի բիւզանդական, արաբական, վրացական կամ թուրքական իշխանաւորներ են եղել, քան թէ իսկական հայ:

Անխոնջ հնագէտը իւր շահագրգիռ այս դասախօսութիւններէ ընթացքում հասարակութեան մոգական լատերի միջոցով ցոյց է տուել նաև կենդանի պատկերներ իւր պեղումներէց, որով աւելի ևս գիւրըմբռնելի էր դասնում դասախօսութեան նիւթը:

Դասախօսութիւնները բացի բարոյական-գիտական յաջողութիւնից ունեցել են և մուտքի յաջողութիւն (մօտ 2 հազար ու.), բացի այդ «Արամազդ» ընկերութիւնը գրել է ուսուցչապետի տրամադրութեան տակ 3 հազար ու., իսկ յարգելի դասախօսի պատուին տրուած ճաշի ժամանակ ժողովուել է մօտ 1400 ուրբի:

Մեծ իրախուսանքի արժանի է Բաքուի կուլտուր. ընկ. այս նախաձեռնութիւնը և ամեն կերպ պէտք է աջակցել եռանդուն ուսուցչապետի ձեռնարկութեան:

Պատգամաւորութիւն փոխարքայի պալատում — Անցեալ դեկտեմբերի 14-ին Կովկասեան Փոխարքային ներկայացան մեր երկրի աղէտեալ գաւառների ներկայացուցիչներից կազմուած մի պատգամաւորութիւն, որ մատուցեց Նորին պայծառափայլութեան մի բաւականին ընդարձակ զեկուցագիր, իւրաքանչիւր աղետեալ գաւառի մանրամասն նկարագրութեամբ ու թուերի աղիւսեակներով: Պատգամաւորութեան մէջ կային ներկայացուցիչներ Զանգեզուրի, Շուշու, Զիվանշիրի, Կարեազինի, Գանձակի, Ղազախի, Արէշի, Նուխու, Ախալքալակի, Բօրչալուի, Նոր-Բայազետի և Ալէքսանդրապօլի գաւառներից, ինչպէս նաև մի քանի թուրքեր Ղազախի գաւառից:

Փոխարքան խոստացաւ ծանօթանալ զեկուցագրի հետ և աջակցել օգնութեան գործին:

Նորին Պայծառափայլութիւնը այս կարևոր գործի առթիւ ժողովներ գումարեց իւր պալատում աղէտեալ գաւառների նահանգապետներից և խառն, ու վերջնականապէս որոշեց միջնորդել ուր հարկն է հասցնել աղէտեալ վայրերին դրամական օգնութիւն մօտ 2,653.500 ու.:

Հանգանակութիւն թիւրքական Հայաստանի տառապեալ հայերի համար.—Իւր կենդանութեան ժամանակ ազգիս հանգուցեալ Հայրապետը միջնորդութիւն էր յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ թոյլ տալ բանալ մի համազգային հանգանակութիւն ի նպաստ թիւրքահայոց սովեալ-տառապեալներին, և այս առթիւ անցեալ մայիսին կաթողիկոսական կոնգալով մի Հանգանակիչ Մասնաժողով ևս ընտրուել և հաստատուել էր Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում մի քանի բազմամարդ ժողովներից ու խնդիրը բազմակողմանի քննելուց յետոյ:

Կովկասի Փոխարքան ներքին և արտաքին գործոց նախարարներին համաձայնութիւնն առնելով անցեալ հոկտեմբերին գրութեամբ յայտնել էր հանգուցեալ Հայրապետին այդ մասին և հաստատել ընտրուած Հանգանակիչ Մասնաժողովը:

Հանգանակիչ մասնաժողովը իւր դիւանով այժմ գործում է արդէն և կոչ է արել բոլոր մերազգիներին օգնութեան ձեռք հասցնել իւրեանց հեռաւոր տառապեալ եղբայրներին: Նուէրները ընդունում են Մասնաժողովի բոլոր անդամները.—կոչ ենք անում մեր ընթերցողներին քրիստոնէական և ազգասիրական զգացման օգնել մեր տաճկահայ տառապեալ եղբայրներին:

Սյս յունուարի 17ին Թիֆլիսում Կովկասի Փոխարքային ներկայացել է մի թուրք պատգամաւորութիւն, միջնորդելու Փոխարքային՝ դադարեցնել առ ժամանակ Շէյխ-Ռւլ-Իսլամին նոր յաջորդ նշանակելու գործը, մինչև որ Անդրկովկասեան մուսուլմանները օրինական ճանապարհով կարողանան ձեռք բերել իրենք, իրենց կրօնապետին ընտրելու իրաւունքը: Պատգամաւորները սորահետ միասին ներկայացրել են Փոխարքային նաև մի պատճառաբանուած զեկուցումն ու Անդրկովկասի մուսուլմաններին ազգային խնդիրների վերաբերեալ նոր կազմած պոլոթենիէ: Նորին Պայծառափայլութիւն Փոխարքան պատգամաւորներին սիրալիւր կերպով ընդունելուց յետոյ՝ խոս-

տանում է իւր կողմից հարկաւոր միջնորդութիւնն անել:

«Вакциное Дѣло» լրագրի № 9-ի մէջ տպուած են ժողովրդական դպրոցների վերատեսուչների թղթերն ուղղուած հայ եկեղեցական—ծխական դպրոցների ուսուցչական մարմիններին: Շրջաբերականները պահանջում են հետեւեալ տեղեկութիւնները. 1. Ուսուցչական մարմինների հսկողութեան յանձնուած արական և իգական դպրոցները քանի դասարան ունեն, ուսեբէն լեզուի, ինչպէս և ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան ուսուցումը որ դասարանից է սկսում. 2. Ո՞ր դասարանից է սկսում ուսաց պատմութեան և աշխարհագրութեան ուսուցումը և 3. Ուղարկել ժողովրդական դպրոցական տեսչութեան ծխական դպրոցների ուսուցիչների ցանկը և յիշել թէ նոցանից իւրաքանչիւրը որտեղ է ուսում ստացել և որ պետութեան հպատակութեան ներքոյ է: Այս շրջաբերականները 1878 թ. Բարձրագոյն հրամանի և 1873 թ. Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատութիւն դրած կարծիքի հիման վերայ է հրատարակուած, որոնք վերաբերում են հայ դպրոցներին և սրանք պարտաւորութիւն են դնում ժողովրդական դպրոցների տեսչութեան վերայ. ա. որ բոլոր դպրոցներում դասաւանդուի ուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, ուր աւանդուած են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդուեն նաև ուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն ուսեբէն լեզուով. որ այդ դպրոցների դասատուները լինեն ուսաստակ և բարոյական արժանիքների տէր:

Մայր Աթոռիս Գէորգեան ձեմարանի Տեսուչ պ. Մ. Բերբերեանը Ամենապատիւ Տէր Տեղակալ Սրբազանի հաճութեամբ և Տիխիսի, Բաքուի, Նոր Նախիջևանի մի քանի մերազնէից հրաւիրանօք դպրոցական ծննդեան սյս արձակուրդներին մեկնեց յիշեալ քաղաքները, ուր ամեն տեղ Ա. Էջմիածնի հոգևոր ներկայացուցիչների նախա-

ձեռնութեամբ կազմուած Ժողովներում՝ բանաւոր և գրաւոր կերպով ներկայացրեց ճեմարանիս բարոյական և նիւթական դրութիւնը, խնդրելով ազգային միակ բարձրագոյն կրթական այս հիմնարկութեան նիւթական ապահովութեան լուրջ աջակցութիւն, գոնէ մինչև Լուսաւորչի նոր դահակալի մուտքը Մայր Աթոռ:

Ժողովականները ամեն տեղ խոստացել են իւրեանց նիւթական օգնութիւնն ու աջակցութիւնը:

Ա. Մեացականեան,



Մ Ա Ն Ր Լ ՈՒ Ր Ե Ր

— Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսում փակուած է հայերէն «Անկախ Մամուլ» լրագիրը. սպարանը կնքուած է և տառերը գրաւուած:

— Թիֆլիսում առաջիկայ փետրուարից հրատարակուելու է հայերէն շաբաթաթերթ «Սարաղան» անունով, պատկերազարդ, Տէր Մկրտչեանի խմբագրութեամբ:

— Մօտ ապագայում Թիֆլիսում Գիւտ քահ. Աղանեանը մտադիր է հրատարակել մի ամենօրեայ թերթ «Հայրենիք» անունով:

— Այս յունուարից լոյս կտեսնի Թիֆլիսում նկարիչ Գարեգին Առնեանի խմբագրութեամբ հայերէն առաջին գեղարուեստական ամսագիրը «Գեղարուեստ» անունով:

— Այս յունուարի 26-ին լրանում է մեր առաջին մանկական ամսագիր «Աղբիւրի»-ի 25 ամեակը. այդ առթիւ Թիֆլիսում, «Աղբիւր»ի խմբագիր Տիգրան Նազարեանի ընկալարանում կլինեն յօրեւանական հանդէսներ:

— Վերջին ժամանակները մեր ազգային թատրոնական ազգատ ըէպէրտուարը ստուարացաւ մի քանի նոր ինքնուրոյն պիէսներով, որոնց թւում են նորերս Թիֆլիսի հայոց բեմի վրայ ներկայացրուած «Սպանուած Աղաւնին» Նար-Գոսի (համանուն լէպիկից վերածած) և «Կարմիր Մարգ» Սահառունու: